ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մարտի 2026 թվականի N 340-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի N 1135-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 57.1-ին կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի «Մի շարք գնման պայմանագրերում փոփոխություն կատարելու թույլտվություն տալու մասին» N 1135-Ա որոշման 8-րդ կետում «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի հետ 07.08.2020 թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/2 պայմանագրում՝ պայմանագրի գնի 23.24 տոկոսի չափով» բառերը փոխարինել «Ավանգարդ շին» ՍՊԸ-ի և «Էկո Սիթի Գրուպ» ՍՊԸ-ի հետ 11.08.2025 թ. կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱԱՇՁԲ-25/6 պայմանագրում՝ պայմանագրի գնի 39.25 տոկոսի չափով» բառերով:

2. Թույլատրել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այրում համայնքի Բագրատաշեն

բնակավայրում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման նպատակով կատարել ձեռք բերվող աշխատանքների փոխարինում այլ բնութագրեր ունեցող աշխատանքներով՝ փոփոխություն կատարելով 2025 թվականի սեպտեմբերի 19-ին «ԷՌԲԱ» ԱԿ-ի, «ԷԿՈ ՍԻԹԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «ԱՎԱՆԳԱՐԴ ՇԻՆ» ՍՊԸ-ի հետ կնքված պետության կարիքների համար գնման N ՀՀՔԿ-ՀՄԱԱՇՁԲ-25/9 պայմանագրում՝ պայմանագրի ընդհանուր գնի 23.14 տոկոսի չափով՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջ-ները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

26.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ